

զաղափարները նա պահանջում է, որ ամեն մարդ կատարէ՝ ինչ որ ուղիղ է, բարի է, որովհետեւ այդ զաղափարները տանում են դէպի անձնական ազատութիւնը:

Մանկավարժներն աշխատում էին երեխաների մէջ զարգացնել անձնական ազատութեան և բարութեան սկզբունքն, ազնուացնել երեխայի ձգտումները, զարգացնել նրա բոլոր ընդունակութիւնները և հաստատ կամքի տէր դարձնել: Երեխայական ամեն մի գործում, ձգտման մէջ, պէտք է կարողանալ հասկացնել բարին, ազնիւը, որպէս զի ժամանակով նա բարի պտուղներ տայ: Ամեն ինչ պէտք է կատարուի առաքինութեան համար և առաքինութեամբ, ահա այդ է ուղիղ Աստուածապաշտութիւնը, որ քարոզում էին Գրէօրէլեան ուսումնարաններում:

ԲԺ. ԼԵԻՈՆ ՏԻԳՐԵՆԵԱՆ,

(Կը շարունակուի):



ԱՂՔԱՏ ԱՇԽԱՏՐԱՅ ՄՆՈՒՆՊ.



Երոպական պետութիւնները մեծ ջանք գործ դնելով ժողովրդի բոլոր խաւերի մէջ ուսումն տարածելու և աշխատելով պարտադիր ուսումը դիւրացնելու, մեծապէս մրցում են իրար հետ աղքատ աշակերտների նաեւ սնունդ մատակարարելով, գերմանական «Բերլիներ Տագերլատ» թերթը մի գեղեցիկ տեղեկութիւն է տալիս այդ մրցման վերաբերմամբ: Աղքատ աշակերտներին սնուցանելու առաջին հաստատու-

թիւնը բացուեց Ֆրանսիայում, որին հետեւեցին Գերմանիան և Գանիան, ապա և Զուիցարիան. իսկ Աւստրիան և Բելգիան հազիւ 3 տարի առաջ շարժուեցան համակրութեամբ դէպի այդ մեծ գործը: Այժմ ուրիշ գործ այնքան չգրաւեց հասարակութեան մտքերը առանց կուսակցական խտրութեանց, որքան աղքատ աշակերտաց սովից ազատելու խնդիրը: Մանկական քնքոյշ հասակում առողջ սնունդն անհրաժեշտ է, որպէս զի ամրանայ մարմինը, որպէս զի եռանդի պակասութիւն չլինի հոգեւոր պահանջները հոգալու համար և որ պակասաւոր սնունդից չվնասուի յետոյ մարմնական առողջութիւնը: Այսպիսով այս խնդիրը վերաբերում է նաեւ ժողովրդի ապագայ դրութեան, ուստի և ամեն կերպ աշխատում են աշակերտների սնունդը կանոնաւորելու: Մեծ քաղաքներում կարիքն աւելի մեծ է և այդ ջանքերը լինում են առաւել շատ, մանաւանդ որ այդ տեղերում հարուստների և աղքատների հակադրութիւնը շատ զգալի է: Եթէ բարեգործական ընկերութիւնները չլինէին, կոպենհագենում 5,000 ի չափ երթեւեկ աշակերտներ սովի մէջ կլինէին. Բերլինում 1891 թ. ձմեռը 7,000 երեխայ են սնուցել, Պարիզում այդ թիւը հասնում է 13000 ի, Վեննայում 3,000 ի, Բրիւսելում 1,500 ի, Բագելում 850 ի, Պրագայում 750 ի և այլն: Անշուշտ այս թուերը թերի են, վասն զի շատ ծնողներ յանձն չեն առնում որ անկարող են իւրեանց որդիներին սնուցանելու: Բայց որտեղ ամաչկոտութիւնը վիակում է ծնողների բերանն, այնտեղ գեղեցկաբարբառ վկայութիւններ են երեխայոց սպրտնած երեսները: Նկատելի է, որ մասնաւոր բարեգործութիւններից է արուել այս գործի առաջի քայլը, և միայն այն ժամանակ է հասարակութեան օգնութեան գիմել, երբ պահանջի զօրանալուն պատճառով միջոցները պակասում էին: Հասարակութիւնը սիրով օգնում էին, սակայն ոչ մի տեղ չէին մտածում խնդրելու պետութեան օգնութիւնը, թէ և

յաճախ լսում էին տրաուշներն որ պետութիւնը մտցրել է պարտադիր ուսումն և ուրեմն պէտք է հոգայ երեխայոց անունդի համար: Ահնջե անգամ Ֆրանսիայում որտեղ պետական կեդրամացումը շատ հզօր է, էլի ընկերութիւններն էին նեցուկ լինում մասնաւոր մարդկանց այդ բարեգործական ձեռնարկութեանց և չէին խնդրում պետութեան աջակցութիւնը:

Նորերս լոյս տեսաւ մի ֆրանսերէն գիրք «ուսումնարանական արգանակ» խորագրով (Les soupes scolaires) մի այդպիսի հաստատութեան քահանայ կառավարչի (P. César ի St. Imier), որի գերմաներէնն էլ հրատարակուեց անցեալ տարին: Անկասկած այս գործում հոգում են առաւելապէս չքաւոր ծնողաց որդիների համար: Ընտրութեան համար օգտուում էին ուսուցչաց տեղեկութիւններից, քանի որ սոքա ամենից լաւ պէտք է գիտենան աշակերտաց դրութիւնն և կարող են տեղեկութիւններ հաւաքել: Ի նկատի էին առնում միայն կարիքի աստիճանը, բայց ոչ թէ սրբան մեղաւոր էին ծնողներն իրեանց չքաւորութեան մէջ: Նշանուոր է և այս որ թէ Ֆրանսիայում և թէ Զուիցարիայի ֆրանսիական մասում հակումն կայ ձեռք առնելու բոլոր աշակերտաց անուցումը: Այս յաջողուել է Պարիզի մօտ Le Perrenx տեղի ընկերութեանց մէջ: Այնտեղ մի համայնական խորհուրդ ձեռնարկել է ընդհանուր ճաշ տալու՝ բոլոր 400 աշակերտաց: Կարելի անելու համար նա տալիս է աղքատներին աւելի քան գուցէ պէտք էր և պահանջում է կարողներից 20 սանիւմ (մօտ 10 կողէկ) մի ճաշի համար, իսկ 2—3 կողէկ իւր կողմից ծախսելով: Բոլոր թէ վճարող թէ ձրիակեր աշակերտներին մուտքի միջոցին տալիս են մի մի տոմս, որով կարող են ուստեստ ստանալ, այնպէս որ երեխայք բնաւ չգիտեն թէ ով է ձրիակեր, ով ոչ: Առ այժմ այնտեղի երեխայոց թուի կէտը ուսում է այդ ընդհանուր ճաշը: Գերմանիայում ծնողները չեն ուզում առանց որդիների ճաշել և միայն

ամենաչքաւորներն են յանձնառու լինում: Մտածում էին նպաստով օգնելու նոյն իսկ ծնողներին, բայց միշտ չի կարելի, զի շատ ծնողներ կծախսեն փողերն այլ բանի վրայ, թողնելով երեխայոց էլի քաղցած: Լաւ չէ ընտանիքներում ճաշել տալ, քանի որ աղքատ աշակերտներն այդ սովորելով՝ արհամարհում են ծնողաց նիստ ու կացը: Այսպիսով գերագասութիւնը միշտ տալիս են դպրոցական ճաշին, մանաւանդ որ մի գումարով կարելի է դպրոցում առաւել շատ աշակերտներ կերակրել: Շատ ծնողներ հեռու են ապրում դպրոցից, շատ երեխաներ ամբողջ օրը չեն կարենում առն դառնալ, ուրեմն շատերը ուրախութեամբ թողնում են երեխայոց ուսումնարանում ճաշել որոշ վճարով:

Շատ աղքատներ հէնց քաղցած են գոյիս ուսումնարան, որոնց և պէտք է լինում իսկոյն կերակրելու, որպէս զի սոված չնրստեն դասի: Շատերը տաք կերակուր չեն ըստանում տանը, ուստի դոցա պէտք է տաք կերակուր տալ: Այդ նկատմամբ է César ի գիրքը «ուսումնարանական արգանակ» կոչուում: Ընդհանուր կանոնն է, որ տրուի պարզ, առողջարար և անգարար կերակուր՝ համապատասխան ծնողաց կեանքի և շրջանի պայմաններին: Ամենից առատ կերակրում են Ֆրանսիայի և Ֆրանսական Զուիցարիայի երեխայք: Պարիզում 13,000 աշակերտ ձրի է ուսաւմ, իսկ 16,000 ը վճարով, վճարով տալիս են արգանակ, բանջարեղէն և միս, և աշխատում են ամեն օր այլ բան տալ: Վճարը 15 սանիւմ է (5 կողէկի չափ)՝ ձրենվում—20 սանիւմ (7 կողէկ) է և տալիս են արգանակ, միս և փոփոխապէս՝ բանջարեղէն միւրգ և պուդինգ: Ավստրա Ռենգարիայում 10 կրեյցեր է (6 կողէկ), որի համար տալիս են Պրագայում հոց ու միս և փոփոխապէս՝ բանջարեղէն, բրինձ, սիսեւ, լոբի ևն: Պեշտում՝ արգանակ, բանջարեղէն, միս և հոց, Գերմ. Զուիցարիայում (Բերնում, Բադելում) 3—4 կողէկի

տալիս են արգանակ կամ կաթ հացով զը
րեթէ նոյնն է և բերինում: այստեղ տալիս
են մի կտոր սպիտակ հաց և կամ մի կտոր
սև հաց խոզի ճարպով կամ կարագով: յե-
տոյ սուրճ, կաթ կամ արգանակ՝ հաճարի
ալիւրով—5—7 կողէկով: Աղքատ երեխանե-
րի թիւն այնքան շատ է, որ ընկերութիւնք
գործընակ՝ Պարիզում ծախսում են մօտ
500,000 ֆրանկ (շուրջ 200,000 ռուբլի):
Այդ ծախում է կերակուրի յատկութիւնից,
վասն զի վճարով շատ են և վճարում են միայն
5 կողէկ, իսկ աղքատների ճաշը չեն ուզում
խորել վճարողների ճաշից: Լիոնում ընկե-
րութիւնները զոհում են 35,000 ֆր.՝ վե-
նան 1889—90 թ. ձմեռը 10,000 գուլդեն,
(6,000 ռուբլի): Բերլինը 1891—92 թ. 10,600
մարկ (մօտ 5,000 ռ.) պակասորդը ծածկե-
լու համար: Մի քանի տեղեր միայն կէս
փողն են տալիս, իսկ ձրի՝ միայն ձմեռը,
երբ շատ ընտանիքներ չեն կարենում աշ-
խատանք անել:

Ուսումնարանական ճաշերը շատ օգտա-
կար հետեւանքներ ունեն. երեխայոց առող-
ջութիւնը բաւանում է, ուսումնարան յաճա-
խելը կանոնաւորուում է և երեխայք պա-
րապում են առաւել քանասիրութեամբ: Մին-
չև անգամ համալսարաններից շատերում
հաստատուած է ճաշ չքաւոր ուսանողների
համար: Այս բոլոր քաջալեր պէտք է լինին՝
սկսած գործը շարունակելու և որտեղ չէ
սկսուած՝ ձեռնարկելու: Հայոց մէջ առաւել
պէտք է այս լու գործի վրայ ուշադրութիւն
դարձնէ Ներսիսեան Հոգ. գլխաւորից: Հոգա-
բարձութիւնն, որ մեծամեծ միջոցներ ունի
բարենպաստակ անորինութիւնների համար,
Յանկալի չէ, որ չքաւոր աշակերտները կե-
րակրուին զանազան ընտանիքներում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԱՂՈՒԱԾԻ Ի ԿՈՆԳՐԱԿԱՆ ՎԵՆԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԻՄ

Կոնգրակ Վեհափառ Հայրապետի համարաւ
1183, որով հաստատէ զԳլխորդին Լզէրեան և
զԳարսեւանն Աղազատեան ի հոգարարձուս երկ-
սեռ գալրոցաց Վաղարշապատու, որպէս և
զանձնափոխանորդան սոցա զՄկրտիչն Արեւեան
և զԳլխորդն Լուսարարեան: 27 յուլիս:

Կոնգրակ Վեհափառ Հայրապետի համարաւ
1221, յանուն փոխանորդի վիճակին Աւեք-
սանդրապօղոս Աշոտ վարդապետի, որով թոյ-
լատէ բանալ զրադարան — ընթերցարան ի
պէտս քահանայից, ըստ խնդրանաց Մորին
Արժանապատուութեան: 3 օգոստոսի:

Կոնգրակ Վեհափառ Հայրապետի համարաւ
1226, որով հաստատէ ի հոգարարձուս Մես-
րոպեան ուսումնարանին Բագու քաղաքի զը-
ժիշկ Դմաւանն Աղամիրդեան և զըժիշկ Մի-
քայէլն Զաւեան և զանձնափոխանորդս սոցա
զԳասպարն Տէր Մարգարեան և զԱստուածա-
տուրն Կաճկաճեան: 4 օգոստոսի:

Կոնգրակ Վեհափառ Հայրապետի համարաւ
1227, որով հաստատէ ի հոգարարձուս Հոխի-
սիմեան ուսումնարանին Բագուայ զԱրսէնն
Կրտսիլեկեան և զՄերսէսն Արեւեան և զանձ-
նափոխանորդան սոցա զԱստուածատուրն Վա-
լէեան և զՄերսէսն Պաւլեան: 4 օգոստոսի:

Կոնգրակ Վեհափառ Հայրապետի համարաւ
1228, որով հաստատէ ի հոգարարձուս մի-
ղասեան օրիորդաց պատրաստական գալրոցին
Բագուայ զԳլխորդն Քալանթարեան և զՎլէք-
սանդրն Մարգարեան (անձնափոխանորդ): 4
օգոստոսի:
